



Հոդվածի հղումը. Բաբայան Վ., Զախարյան Ն. (2025), ՀՀ առևտրային բանկերի միավորման և/կամ միաձուլման գործընթացի առանձնահատկությունները («Արդշինբանկ» ՓԲԸ-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի գործարքի օրինակով), *Տնտեսություն և հասարակություն*, ՀՊՏՀ, *Տնտեսագետ*, 1(7), 53-74, DOI: 10.52174/29538114_2025.1-53

Ներկայացվել է խմբագրություն՝ 24.06.2025 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 26.06.2025 թ.

Երաշխավորվել է հրապարակման՝ 13.08.2025 թ.

ՎԱՀԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0009-0003-2096-2274>

ՆՈՒՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի

 <https://orcid.org/0009-0007-7077-414X>

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ («ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-Ի ՄԻՋԵՎ ԳՈՐԾԱՐՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Սույն հետազոտության հիմնական նպատակն է վերլուծել, թե ինչ գործընթաց է ընկերությունների միացումը և միաձուլումը՝ գնահատելով «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ձեռքբերման ազդեցությունը բանկի ֆինանսատնտեսական դիրքի վրա՝ միաժամանակ բացահայտելով կառավարման հնարավոր նոր մարտահրավերները:

Այս նպատակով ուսումնասիրվել են՝ ինչպես է կայացվում միացման/միաձուլման մասին որոշումը, ինչ բնույթի է միացման/միաձուլման պայմանագիրը, ինչ հարցերի շուրջ է որոշում կայացվում միաձուլմանը (միացմանը) մասնակցող ընկերությունների համատեղ ժողովի ժամանակ, դիտարկվել են նաև ՀՀ առևտրային բանկերի առանձնահատկությունները:

Ուսումնասիրելով «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ձեռքբերումը՝ վերլուծվել են երկու բանկերի ֆինանսատնտեսական ցուցանիշները, որի համար կիրառվել են քանակական և համեմատական վերլուծության

մեթոդներ, ինչպես նաև իրականացվել է SWOT վերլուծություն՝ բացահայտելով միավորված նոր բանկի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու ազդեցությունները:

Հետազոտության շրջանակում վերլուծվել են ակտիվների կառուցվածքը, նորմատիվային կապիտալը, շահութաբերությունը, եկամուտներն ու ծախսերը, իրացվելիության և կապիտալի հարաբերակցությունները, ինչպես նաև երկու բանկերի կառավարման մշակույթների հիմնահարցերը:

Հնարավոր մարտահրավերները բացահայտելու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ համապարասխան օրենսդրությունը: Դիտարկվել է նաև տեղական և միջազգային փորձը, մասնավորապես՝ բանկերի միաձուլման թե՛ հաջող, թե՛ խնդրահարույց օրինակները: Արդյունքները ցույց են տալիս, որ միավորման արդյունքում «Արդշինբանկ» ՓԲԸ-ն կհաստատի իր առաջատար դիրքը ՀՀ բանկային համակարգում՝ ամրապնդելով ֆինանսական կայունությունը և մեծացնելով շուկայական ազդեցությունը: Միևնույն ժամանակ, ընդգծվել են միավորման հնարավոր ռիսկերը՝ կապված կառավարման ինտեգրման, ծառայությունների որակի պահպանման և միջազգային պարզամիջոցների հնարավոր ազդեցության հետ: Վերլուծությունն ընդգծում է նաև «Արդշինբանկ» ՓԲԸ ռազմավարական կարողությունը նման խոշոր ինտեգրման գործընթացներն արդյունավետ իրականացնելու և համակարգային կայունության ապահովման գործում վճռական դեր ունենալու առումով:

Հիմնաբառեր. «Արդշինբանկ» ՓԲԸ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, ակտիվներ, նորմատիվային կապիտալ, հաշվեկշռային կապիտալ, շահույթ, բանկ

JEL: G21, G34

DOI: 10.52174/29538114_2025.1-53

Ներածություն: ՀՀ բանկային համակարգը վերափոխման նոր փուլ է մտնում՝ պայմանավորված խոշոր ֆինանսական ինստիտուտների միաձուլումներով, ինչպես նաև բանկերի գործառույթների տրոհման միջոցով նոր՝ փոքրածավալ ֆինանսական ինստիտուտների ձևավորմամբ: Այս համատեքստում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ձեռքբերումը դիտարկվում է ոչ միայն որպես խոշոր գործարք, այլև որպես ռազմավարական քայլ:

Բանկային համակարգը յուրաքանչյուր երկրի տնտեսության ֆինանսական հենասյունն է, որն ապահովում է տնտեսության կայունությունն ու զարգացումը, մասնավորապես՝ իրացվելի ռեսուրսների նկատմամբ պահանջների բավարարումը: Այն կարևոր դիրք է զբաղեցնում երկրի տնտեսության կառավարման գործում՝ ապահովելով կապիտալի շարժը, ներդրումային հնարավորությունները և ֆինանսական կայունությունը: Ուստի ոլորտի ուսումնասիրությունը կարևոր և ուշագրավ տեղ է զբաղեցնում՝ հնարավորություն տալով բացահայտելու տվյալ ոլորտի զարգացման միտումները, մարտահրավերները և ներուժը:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի ռազմավարական նման մոտեցումը կարող է ուժեղացնել ոչ միայն բանկի դիրքերը, այլև նպաստել շուկայի կայունությանն ու մրցակցային միջավայրի զարգացմանը: Սույն գործարքը համակարգային հարց է, ուստի ընտրվել է որպես դիտարկման առարկա:

2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները՝ 11,3 տրիլիոն դրամ, կազմել են ՀՆԱ 112%-ը, իսկ շահույթը՝

373,3 մլրդ դրամ, կազմել է ՀՆԱ 4%-ը¹, ուստի այս հոդվածի հիմնական նպատակն է ուսումնասիրել ընկերությունների միացումը և միաձուլումը ՀՀ օրենսդրության համաձայն՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի միավորման օրինակով, ինչպես նաև վերլուծել և բացահայտել կառավարման առաջացող մարտահրավերները:

Սույն հոդվածի նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել միացման և միաձուլման (կոնսոլիդացիա) գաղափարները և ՀՀ օրենսդրությունը:
- Վերլուծել՝ ինչ գործընթաց է ընկերությունների միացումն ու միաձուլումը, ինչպես է կայացվում միացման/միաձուլման մասին որոշումը:
- Ուսումնասիրել դիտարկվող բանկերի ֆինանսատնտեսական գործունեությունը, բացահայտել խնդիրները:
- Վերլուծել ֆինանսատնտեսական գործառույթները, բացահայտել միտումները և օրինաչափությունները:
- Վերլուծել տեղական և միջազգային փորձը տվյալ ոլորտում տեղի ունեցող միավորումների համատեքստում:
- SWOT վերլուծության միջոցով բացահայտել ուսումնասիրվող բանկերի միավորման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու առավելությունները:
- Գնահատել վերջնարդյունքները:

Գրականության ակնարկ: Հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրների լուծման նպատակով նախևառաջ ուսումնասիրվել են ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը², «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը³, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը⁴, ներկայացվել է, թե ինչ գործընթաց է ընկերությունների միացումը և միաձուլումը, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի համանման գործընթացներում ինչպիսի առանձնահատկություններ կան:

Բացի այդ, ուսումնասիրվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված իրավակարգավորումները, որոնք ապահովում են բանկային ոլորտի գործունեության կայունությունն ու արդյունավետությունը: Մասնավորապես՝ ուսումնասիրության հիմքում ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թ. փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված՝ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ն է, որով սահմանվում են կապիտալի համարժեքության, իրացվելիության, ռիսկերի կենտրոնացման, գործառնությունների սահմանափակումների և այլ ֆինանսական ցուցանիշների կարգավորման մեխանիզմները: Այս կանոնակարգում կարևոր շեշտադրում է արվում կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերի կառավարման՝ որպես ֆինանսական կայու-

¹ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, <https://armstat.am/am/?nid=12&type=1>

² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, <https://www.arlis.am/hy/acts/74658>

³ Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/hy/acts/69106>

⁴ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/hy/acts/80071>

նության ապահովման հիմնական նախապայմանների վրա⁵:

Ուսումնասիրվել է նաև ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թ. ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 4-ը՝ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները», որով սահմանվում են բանկերի ներքին վերահսկողության համակարգի կառուցման և գործարկման կարևորագույն չափանիշները: Այս կարգավորումները նպատակ ունեն բարձրացնելու բանկային համակարգի թափանցիկության աստիճանը և նվազեցնելու ներքին ռիսկերից բխող սպառնալիքները⁶:

Ուսումնասիրության շրջանակում վերլուծվել է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող ֆինանսական կայունության հաշվետվությունը, որն արտացոլում է ոչ միայն ներքին կարգավորման քաղաքականության ընթացիկ վիճակը, այլև գնահատում է արտաքին մարտահրավերների և համաշխարհային ֆինանսական զարգացումների ազդեցությունը տեղական բանկային համակարգի վրա⁷:

Կարևորվել է Բազելի բանկային վերահսկողության կոմիտեի⁸ կողմից սահմանված չափորոշիչների և կարգավորումների, մասնավորապես՝ Բազել I, II, III և վերջին՝ Բազել IV մոտեցումների ուսումնասիրությունը:

Բազել I: Սահմանում է կապիտալի և ռիսկի կշիռների կառուցվածքը՝ նվազագույն հարաբերակցությունը՝ 8%:

Բազել II: Նպատակ ունի պարզաբանելու, թե ինչպես են կարգավորող կապիտալի պահանջները արտացոլում ռիսկերը, նաև խրախուսելու ռիսկերի չափման բարելավումները:

Բազել III: Արձագանքելով 2007–2009 թթ. ֆինանսական ճգնաժամին՝ ուղղված է բանկերի ռիսկերի կառավարմանն ու կապիտալի ամրապնդմանը:

Բազել IV: Այս մոտեցումը նպատակուղղված է նախորդ չափորոշիչների բարեփոխմանը:

Միջազգային չափորոշիչները լայնորեն կիրառվում են համաշխարհային ֆինանսական կենտրոններում և դիտվում են որպես բարելավման ուղեցույց նաև ՀՀ-ում⁹:

Կարևորելով կորպորատիվ կառավարումը՝ ուսումնասիրվել են միացման և միաձուլման ինչպես տեղական, այնպես էլ միջազգային փորձը: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրված գրականությունն ընդգրկում է ինչպես նորմատիվ իրավական ակտեր, այնպես էլ միջազգային մասնագիտական հետազոտություններ ու փորձագիտական վերլուծություններ, որոնք համակցվում են ՀՀ-ում գործող համակարգի առանձնահատկությունների հետ՝ ապահովելով համապարփակ և համադրական մոտեցում հետազոտության հիմնական խնդիրների բացահայտման գործում:

⁵ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի հիմնադրույթները, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>

⁶ Տե՛ս «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումը, 16.04.2013, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=83799>

⁷ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2023, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2023.pdf

⁸ Տե՛ս History of the Basel Committee, <https://www.bis.org/bcbs/history.htm>

⁹ Տե՛ս **Daugherty G.**, Economy Introduction To Fiscal Policy “What Is Basel IV?” article, By Updated August 31, 2022, Reviewed by Robert C. Kelly, Fact checked by Vikki Velasquez, <https://www.investopedia.com/basel-iv-5218598>

Մեթոդաբանություն: Սույն հոդվածի շրջանակում կիրառվել է խառը մեթոդաբանական մոտեցում, որը ներառում է տեսական և փորձառական ու վերլուծական մեթոդներ: Մեթոդների համադրումը նպաստել է միավորման գործընթացի բոլոր հիմնական՝ ֆինանսական, կառավարման և ռազմավարական տեսանկյուններից համապարփակ գնահատմանը:

Նախքան վերլուծությանն անցնելը, իրականացվել է միացման և միաձուլման գաղափարների և մոտեցումների ուսումնասիրություն: Դրա արդյունքում բացահայտվել են «Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ միավորման հիմնական միտումները:

Հետազոտության շրջանակում կիրառվել են տարբեր գիտական մեթոդներ՝ ապահովելով վերլուծության ամբողջականությունն ու խորությունը: Մասնավորապես՝

Տեսական մեթոդներ

Տեսական մեթոդները կիրառվել են միավորման գործընթացների բնույթի, միջազգային փորձի և բանկային համակարգի զարգացման տեսությունների ուսումնասիրության նպատակով:

- **Դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդների** միջոցով ստուգվել են համաշխարհային բանկային միավորումների օրինաչափությունները Հայաստանի բանկային միջավայրում:
- **Վերացարկման մեթոդով** առանձնացվել են ուսումնասիրության համար առանցքային գործոնները՝ բացառելով կողմնակի ազդեցությունները:
- **Դիալեկտիկական մոտեցմամբ** վերլուծվել են շուկայի մրցակցային հարաբերությունները և կառավարման վերակազմավորման խնդիրները:

Վերլուծական մեթոդներ

- **Քանակական մեթոդներ**, որոնք կիրառվել են բանկերի ֆինանսական ցուցանիշների՝ ակտիվների, կապիտալի, շահութաբերության, իրացվելիության և այլ ֆինանսական տվյալների չափելի վերլուծության նպատակով:
- **Նորմատիվային վերլուծություն**, որը հիմնված է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած կարգավորումների վրա:
- **Համեմատական վերլուծություն**, ներառյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ միավորման գործընթացների արդյունավետության գնահատման նպատակով:
- **Դինամիկ վերլուծություն**, որի միջոցով ուսումնասիրվել են ֆինանսական ցուցանիշների փոփոխությունները գործարքի արդյունքում՝ միտումների բացահայտման համար:
- **Պատճառահետևանքային (կազուալ) վերլուծություն**, որի նպատակն է պարզել որոշակի ֆինանսական փոփոխությունների հնարավոր պատճառները և հետևանքները:

Վերլուծությունն ամփոփվել է SWOT մեթոդով, որի արդյունքում բացահայտվել են բանկերի միավորման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները: Այս համապարփակ մոտեցումը հնարավորություն է տալիս առավել լավ պատկերացնելու այն մարտահրավերները և առավելությունները, որոնք կարող են ի հայտ գալ միավորման գործընթացում:

Վերլուծություն: Հաշվի առնելով հողվածի շրջանակում ուսումնասիրվող թեմայի հիմնական առանձնահատկությունները՝ նախաառաջ նպատակահարմար է պարզել՝ ինչ են ենթադրում բանկերի միացման և միաձուլման գաղափարներն իրենց բովանդակությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է իրավաբանական անձանց վերակազմակերպման հետևյալ տեսակները՝ առանձնացում, բաժանում, միացում, միաձուլում և վերակազմավորում: Պետք է նշել, որ միացումը և միաձուլումը իրավաբանական անձանց վերակազմակերպման ամենատարածված ձևերից են: Ընկերությունների միաձուլման դեպքում երկու կամ ավելի իրավաբանական անձինք դադարում են գոյություն ունենալուց և փոխարենը միասին ստեղծում են նոր իրավաբանական անձ: Մինչդեռ միացման արդյունքում մեկ կամ մի քանի ընկերություններ դադարում են գոյություն ունենալուց՝ միանալով արդեն իսկ գոյություն ունեցող մեկ այլ ընկերության¹⁰:

Նման կորպորատիվ գործողությունների ժամանակ անպայման տեղի է ունենում իրավահաջորդություն: Մասնավորապես՝ նոր ստեղծվող կամ արդեն գոյություն ունեցող իրավաբանական անձանց են անցնում միացող կամ միաձուլվող ընկերությունների բոլոր իրավունքները և պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

Ընկերությունների վերակազմակերպման գործընթացները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, և, կախված ընկերության կազմակերպատարական ձևից, նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով¹¹:

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ միավորման դեպքում «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն միանում է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, ինչի արդյունքում վերջինս շարունակում է գործել որպես պահպանվող ընկերություն, իսկ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն դադարում է գործելուց:

Այս համատեքստում, ըստ օրենսդրության, պահպանվող ընկերությունը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, ստանձնում է երկու բանկերի բոլոր իրավունքներն ու պարտականությունները, իսկ դադարած ընկերության՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին՝ որպես իրավահաջորդի:

Միաձուլվող և միացող ընկերություններից յուրաքանչյուրի ընդհանուր ժողովում պետք է ընդունվի միաձուլման/միացման ձևով վերակազմակերպման մասին որոշում: Այդ ժողովի ընթացքում հաստատվում են նաև միաձուլման/միացման պայմանագիրը, փոխանցման ակտը, միացման/միաձուլման կարգը և պայմանները, ինչպես նաև ընկերությունների բաժնետոմսերի և արժեթղթերի փոխարկման կարգը նոր ստեղծվող ընկերության (միաձուլման դեպքում) կամ այն ընկերության բաժնետոմսերի, որին միանում են (միացման դեպքում):

¹⁰ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/hy/acts/80071>

¹¹ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքները, <https://www.arlis.am/hy/acts/80069>, <https://www.arlis.am/hy/acts/69106>

Միացման/միաձուլման պայմանագիրն այն հիմնական փաստաթուղթն է, որը կարգավորում է երկու և ավելի ընկերությունների միջև համատեղ գործունեությունը մինչև կորպորատիվ գործողության պետական գրանցման պահը: Մասնավորապես՝ համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50.6-րդ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածների դրույթների՝ միաձուլման (միացման) պայմանագիրը կնքվում է միաձուլմանը (միացմանը) մասնակցող ընկերությունների միջև, ստորագրվում է ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից և ենթակա է հաստատման՝ նրանց ընդհանուր ժողովների կողմից: Այն պետք է բովանդակի՝

- ✓ մասնակից ընկերությունների ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման տվյալները.
- ✓ միաձուլման (միացման) ժամկետները, կարգը և պայմանները.
- ✓ միաձուլվող (միացող) ընկերության բաժնեմասերի/բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ եղանակով.
- ✓ միաձուլվող (միացվող) ընկերությունների բաժնեմասերի/բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ ստանալու կարգը և պայմանները.
- ✓ համատեղ ժողովում քվեարկության կարգը.
- ✓ միաձուլմանը (միացմանը) մասնակցող ընկերությունների համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը¹²:

Սրանք այն տեղեկություններն են, որոնք, օրենքով սահմանված կարգով, պարտադիր պետք է ներառվեն միաձուլման (միացման) պայմանագրում, սակայն կողմերն ազատ են նաև իրենց հայեցողությամբ ավելացնելու այլ տեղեկություններ:

Այս գործընթացում իրավաբանական անձանց պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատառումներով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքները ընկերությունների համար նախատեսել են իրենց պարտատերերին միացման/միաձուլման մասին ծանուցելու պարտավորություն: Պարտատերերն իրավունք ունեն նման ծանուցում ստանալու պահից 30 օրվա ընթացքում պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ դադարեցնելու վերակազմակերպումը (միաձուլում/միացումը) կամ վաղաժամկետ կատարելու պարտավորությունը և հատուցելու վնասները¹³:

Ընկերությունների միաձուլման/միացման գործընթացներում կարող է անհրաժեշտություն առաջանալ ստանալու Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի թույլտվությունը՝ հաշվի առնելով, որ որոշ դեպքերում չի բացառվում ազատ տնտեսական մրցակցությանը խոչընդոտող համակենտրոնացման ռիսկի առկայությունը:

¹² Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/hy/acts/69106>

¹³ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքները, <https://www.arlis.am/hy/acts/80069>, <https://www.arlis.am/hy/acts/69106>

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»¹⁴ ՀՀ 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված տնտեսավարող սուբյեկտների միացումը.
- 2) Հայաստանի Հանրապետությունում գրանցված տնտեսավարող սուբյեկտների միաձուլումը:

Ընդ որում, նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների միացումը կամ միաձուլումը կոիտվի որպես համակենտրոնացում այն դեպքում, երբ այն կայացվի.

- 1) միևնույն ապրանքային շուկայում (հորիզոնական համակենտրոնացում),
- 2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում (ուղղահայաց համակենտրոնացում),
- 3) տարբեր ապրանքային շուկաներում (խառը համակենտրոնացում)¹⁵:

Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից միացում կամ միաձուլում կատարելն ինքնին չի համարվի համակենտրոնացում, եթե չիրականացվի միևնույն ապրանքային շուկայում կամ որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում, կամ տարբեր ապրանքային շուկաներում:

Ավելին, ինչ վերաբերում է ֆինանսական կազմակերպությունների վերակազմակերպմանը, ապա դրանց դեպքում թույլատրվում է միայն կատարել միացում, որի նկատմամբ վերահսկողություն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը:

Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների միջև իրականացվող համակենտրոնացումները ենթակա են հայտարարագրման՝ նույն օրենքով և Հանձնաժողովի կողմից նախատեսված պահանջների դեպքում, մասնավորապես՝ երբ.

- Համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է **չորս միլիարդ դրամը**, կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է **երեք միլիարդ դրամը**, *կամ*
- Համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է **չորս միլիարդ դրամը**, կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է **երեք միլիարդ դրամը**, *կամ*

¹⁴ Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/hy/acts/151201>

¹⁵ Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/hy/acts/151201>

- Համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու տարվան նախորդող ֆինանսական տարում գործունեություն չիրականացրած կամ 12 ամսից պակաս ժամանակահատվածում գործունեություն իրականացրած համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող 12 ամիսների հաշվարկով գերազանցել է **չորս միլիարդ դրամը**, կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող 12 ամիսների հաշվարկով գերազանցել է **երեք միլիարդ դրամը**¹⁶:

Տնտեսավարող սուբյեկտների վերակազմակերպումները, գործողությունները կամ գործարքները, որոնք տեղի են ունենում Հանձնաժողովի որոշմամբ հաստատված իրավաբանական և կամ ֆիզիկական անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև, չեն համարվում համակենտրոնացում և ենթակա չեն հայտարարագրման: Այնուամենայնիվ, համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի, անձանց խմբի ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների մասին Հանձնաժողովը պետք է տեղեկացվի գործարքի կատարումից հետո 10 օրվա ընթացքում¹⁷:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անձանց խումբը իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, սակայն բավարարվում է օրենքով սահմանված պահանջներից որևիցե մեկը: Նման պահանջներից են, օրինակ՝

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու կազմակերպության կանոնադրական կապիտալի կեսից ավելին, կամ
- կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձը կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ պայմանագրի հիման վրա կամ այլ ձևով հնարավորություն է ստանում կանխորոշելու այդ կազմակերպությունների կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպությունների կողմից պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ,
- կազմակերպությունները, որոնցում կոլեգիալ գործադիր մարմնի անդամների կեսից ավելին միևնույն ֆիզիկական անձինք են¹⁸:

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ հիմնական ցուցանիշների վերլուծությունը ՀՀ բանկային համակարգում: Հետազոտության հիմնական նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են ՀՀ բանկային համակարգի 18 առևտրային բանկերի (ներառյալ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն) հիմնական ֆինանսական ցուցանիշները:

¹⁶ Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/hy/acts/151201>

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

Ըստ աղյուսակ 1-ի՝ 2024 թվականին «Արդշինբանկ» ՓԲԸ-ն եղել է բանկային համակարգի առաջատարը՝ ունենալով 2.3 տրիլիոն ՀՀ դրամի ակտիվներ, ինչը կազմում է բանկային համակարգի ակտիվների 20.48%-ը, 281.5 միլիարդ ՀՀ դրամ (16.4%) նորմատիվային կապիտալ և 132.7 միլիարդ ՀՀ դրամի շահույթ՝ գրանցելով 111.74%-ի աճ:

Աղյուսակ 1

**ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները
(31/12/2024 թ. դրությամբ, հազ. դրամ)¹⁹**

	Բանկի անվանումը	Ակտիվներ		Նորմատիվային կապիտալ	Շահույթ	
		գումար	Տ/Կ		գումար	Տ/Կ
1	«Ինեկոբանկ» ՓԲԸ	775,546,059	6.88%	109,186,581	29,203,527	7.82%
2	«ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	128,686,433	1.14%	36,225,848	1,313,558	0.35%
3	«Այդիբանկ» ՓԲԸ	422,441,870	3.75%	58,883,858	15,781,394	4.23%
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	1,882,507,840	16.71%	273,348,297	60,029,336	16.08%
5	«Ակբա-Բանկ» ԲԲԸ	937,862,723	8.32%	141,040,689	28,365,858	7.60%
6	«Արցախբանկ» ՓԲԸ	170,876,238	1.52%	37,374,342	3,361,676	0.90%
7	«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ	235,984,247	2.09%	49,089,281	6,122,283	1.64%
8	«Յունիբանկ» ԲԲԸ	339,651,132	3.01%	41,610,293	10,171,122	2.72%
9	«Էվոկաբանկ» ՓԲԸ	552,226,371	4.90%	80,078,261	14,609,195	3.91%
10	«ԱՄԻՈ Բանկ» ՓԲԸ	881,255,493	7.82%	101,673,711	2,838,816	0.76%
11	«Մեյլաբանկ» ՓԲԸ	119,555,811	1.06%	57,839,479	6,116,155	1.64%
12	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	575,948,483	5.11%	80,739,885	15,612,848	4.18%
13	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ[1]	243,010,758	2.16%	62,766,419	10,195,736	2.73%
14	«ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ	527,659,043	4.68%	73,244,929	9,002,901	2.41%
15	«Արդշինբանկ» ՓԲԸ	2,307,218,414	20.48%	281,460,716	132,709,916	35.55%
16	«Արմավիսբանկ» ՓԲԸ	467,255,811	4.15%	98,162,488	10,324,800	2.77%
17	«Արարատբանկ» ԲԲԸ	421,286,175	3.74%	60,908,375	12,596,991	3.37%
18	«Փասթ Բանկ» ՓԲԸ	276,792,354	2.46%	66,814,180	4,988,418	1.34%
Ընդամենը		11,265,765,255	100%	1,710,447,632	373,344,530	100%

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի համար կարևոր է գնահատել, թե ինչ ազդեցություն կունենա «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ձեռքբերումը զարգացման և ֆինանսական կայունության առումով: Սա ներառում է երկու բանկերի կառավարման մոտեցումները, պարտավորությունների ծավալի աճ, կապիտալի բավարարության հարաբերակցության վերահսկում և շահութաբերության պահպանում:

Տնտեսագիտության և ֆինանսների ոլորտում ընկերության շահութաբերությունն ու ֆինանսական արդյունավետությունը գնահատելու համար կարևոր ցուցանիշներ են համարվում սեփական կապիտալի և ակտիվների շահութաբերության (ROE, ROA) ցուցանիշները:

«Արդշինբանկ» ՓԲԸ ընդհանուր կապիտալի շահութաբերության (ROE) ցուցանիշը 2024 թ. կազմել է 41.09%, իսկ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ինը՝ 14.34%:

¹⁹ Կազմել են հեղինակները՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված միջանկյալ հաշվետվություններում ներառված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

Ինչ վերաբերում է ակտիվների շահութաբերության (ROA) ցուցանիշին, ապա «Արդշինբանկ» ՓԲԸ-ում դա կազմել է 5.75%, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում՝ 4.19%:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն վերը նշված ֆինանսական ցուցանիշների գծով (բարձր ակտիվներ, նորմատիվային կապիտալ և զգալի շահույթ) հնարավորություն է ունենում գտնվելու առաջատար բանկերի շարքում:

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերլուծություն:

Այժմ առավել մանրամասն ուսումնասիրենք նշված բանկերի տնտեսական միջոցներն ու դրանց աղբյուրների կազմն ու կառուցվածքը:

Աղյուսակ 2

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (31/12/2024 թ. դրությամբ, հազ. դրամ)²⁰

Անվանումը	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ		«Արդշինբանկ» ՓԲԸ		ԸՆԴԱՄԵՆԸ ²¹
	գումար	Տ/Կ ²²	գումար	Տ/Կ	
Ակտիվներ					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	18,275,503	1%	541,450,958	37%	1,469,515,530
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	0	0%	0	0%	781,935
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	31,930,950	4%	226,774,671	28%	802,994,407
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	196,127	0%	39,592,999	14%	279,033,907
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	170,383,548	3%	1,123,746,602	17%	6,447,450,652
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	10,921,373	3%	22,337,895	6%	398,763,185
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	4,832,722	0%	321,415,116	22%	1,466,284,863
Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում		0%		0%	9,614,948
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	3,903,752	2%	20,860,053	10%	215,760,840
Հետաձգված հարկային ակտիվներ		0%		0%	829,663
Այլ ակտիվներ	2,566,783	1%	11,040,121	6%	174,735,326
Ընդամենը՝ ակտիվներ	243,010,758	2%	2,307,218,415	20%	11,265,765,256

²⁰ Կազմել են հեղինակները՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված միջանկյալ հաշվետվություններում ներառված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

²¹ Ցույց է տալիս ՀՀ առևտրային բանկերի ամփոփ արդյունքը:

²² Ցույց է տալիս՝ համակարգի որ մասն է կազմում:

Պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18,486,858	1%	397,490,673	22%	1,835,211,907
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	143,436,334	2%	1,467,540,345	22%	6,574,018,969
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր		0%	61,623,151	12%	508,153,135
Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն		0%		0%	242,241,959
Վճարվելիք գումարներ		0%		0%	961,313
Հետաձգված հարկային պարտավորություններ		0%	7,136,097	34%	21,092,078
Պահուստներ		0%		0%	1,096,240
Այլ պարտավորություններ	9,987,650	4%	50,504,273	22%	232,588,445
Ընդամենը՝ պարտավորություններ	171,910,842	2%	1,984,294,539	21%	9,415,364,046
Կապիտալ					
Կանոնադրական կապիտալ	18,434,350	2%	102,454,400	13%	811,090,170
Էմիսիոն եկամուտ	0	0%	51	0%	52,817,288
Պահուստներ՝	3,356,548	3%	16,226,108	13%	128,481,136
Գլխավոր պահուստ	2,765,153	3%	10,580,485	12%	89,622,322
Վերազնահատման պահուստներ	591,395	2%	5,645,623	15%	38,858,814
Զբաղիված շահույթ (վնաս)	49,309,018	6%	204,243,315	24%	858,012,613
Ընդամենը կապիտալ	71,099,916	4%	322,923,874	17%	1,850,401,207
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ	243,010,758	2%	2,307,218,413	20%	11,265,765,253
Բանկի մասնաճյուղերի քանակը	9	2%	66	11%	580

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» և «Արդշինբանկ» ՓԲԸ-ների ակտիվներում հիմնական մասը կազմում են հաճախորդներին տրված վարկերն ու այլ փոխառություններ, համապատասխանաբար՝ մոտ 170 մլն և 1,124 մլն ՀՀ դրամ: Միավորումից հետո այս ցուցանիշն աճում է՝ հասնելով շուրջ 1,294 մլն ՀՀ դրամի: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ակտիվներում մեծ տեսակարար կշիռ ունեն բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները, իսկ «Արդշինբանկում»՝ կանխիկ միջոցներն ու ԿԲ-ում մնացորդները, համապատասխանաբար՝ 4% և 37%:

Պարտավորությունների կառուցվածքում երկու բանկերում մեծ են հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, համապատասխանաբար՝ 143 մլն («Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ) և 1,468 մլն ՀՀ դրամ («Արդշինբանկ» ՓԲԸ), որոնք, միավորումից հետո, կկազմեն շուրջ 1,610 մլն ՀՀ դրամ: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում մեծ տեսակարար կշիռ ունեն այլ պարտավորությունները (4%), իսկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝ հետաձգված հարկային պարտավորությունները (34%): Միավորման արդյունքում «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ստանձնում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ որոշ կամ բոլոր պարտավորությունները, ինչը կարող է հանգեցնել ռիսկերի՝ հաճախորդների հնարավոր կորստի տեսանկյունից:

ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշները (31/12/2024 թ. դրությամբ, հազ. դրամ)²³

N	Սահմանաչափ	Կանոնադրական կապիտալ, հազ. ՀՀ դրամ	Նորմատիվային կապիտալ, հազ. ՀՀ դրամ	Ն1/1	Ն1/2	Ն2/1	Ն2/2	Ն3/1	Ն3/2	Ն4/1	Ն4/2
	Բանկի անվանումը		30 մյուս դրամ	6.2%	8.3%	15%	60%	20%	500%	5%	20%
1	«Ինտելլեքանկ» ՓԲԸ	47,845,454	109,186,581	14.60%	17.10%	25.60%	68.90%	13.20%	76.10%	0.20%	3.00%
2	«ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	26,506,249	36,225,848	31.30%	33.90%	38.50%	238.30%	17.70%	48.00%	2.00%	5.20%
3	«ԱյդիԲանկ» ՓԲԸ	38,985,949	58,883,858	18.20%	19.30%	30.90%	76.60%	10.20%	81.30%	3.60%	11.70%
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	54,741,241	273,348,297	14.40%	16.60%	21.90%	65.00%	18.40%	104.90%	1.10%	7.50%
5	«Ակբա-Բանկ» ԲԲԸ	93,586,978	141,040,689	17.90%	20.60%	26.50%	110.00%	8.70%	23.10%	1.60%	6.40%
6	«Արգախբանկ» ՓԲԸ	23,261,150	37,374,342	81.30%	86.90%	77.80%	286.50%	10.40%	16.10%	0.20%	1.10%
7	«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ	63,906,231	49,089,281	23.90%	25.00%	27.20%	106.80%	5.30%	5.30%	1.90%	6.20%
8	«Յունիբանկ» ԲԲԸ	33,704,675	41,610,293	13.50%	15.20%	26.10%	79.90%	11.30%	70.30%	4.60%	12.90%
9	«Էվոկաբանկ» ՓԲԸ	23,000,000	80,078,261	14.30%	17.10%	38.10%	125.00%	11.10%	53.10%	3.10%	6.80%
10	«ԱՄԻՈ Բանկ » ՓԲԸ	170,092,515	101,673,711	17.20%	18.00%	20.10%	87.00%	19.80%	133.70%	0.20%	2.50%
11	«Մեյլաթբանկ» ՓԲԸ	32,100,000	57,839,479	59.40%	60.20%	59.60%	124.20%	15.70%	35.20%	1.60%	3.30%
12	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	20,010,866	80,739,885	16.60%	17.40%	34.40%	101.30%	6.50%	15.80%	3.00%	11.20%
13	«ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	18,434,350	62,766,419	21.50%	22.30%	26.20%	64.70%	17.80%	145.30%	0.40%	2.60%
14	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	39,340,989	73,244,929	15.80%	18.10%	17.30%	99.40%	12.70%	93.80%	2.80%	13.20%
15	«Արդշինբանկ» ՓԲԸ	102,454,451	281,460,716	21.20%	22.20%	42.20%	75.40%	15.40%	144.90%	0.50%	3.20%
16	«Արմավիսբանկ» ՓԲԸ	16,205,748	98,162,488	16.10%	21.90%	39.60%	197.60%	13.90%	63.10%	4.50%	15.00%
17	«Արարատբանկ» ԲԲԸ	19,630,412	60,908,375	17.30%	18.00%	39.40%	110.30%	11.10%	58.90%	2.00%	12.40%
18	«Ֆասթ Բանկ» ՓԲԸ	40,100,200	66,814,180	24.10%	26.90%	18.60%	140.50%	12.20%	44.70%	1.80%	4.50%
Ընդամենը		863,907,458	1,710,447,632	24.40%	26.50%	33.90%	119.90%	12.90%	67.40%	2.00%	7.10%

²³ Կազմել են հեղինակները՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված միջանկյալ հաշվետվություններում ներառված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfbanks.aspx>

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ֆինանսական կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությունը ՀՀ բանկային համակարգում: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ձեռքբերումը կարող է մեծացնել «Արդշինբանկ» ՓԲԸ պարտավորությունները, ինչը կարող է ազդել նրա կապիտալի և իրացվելիության հարաբերակցությունների վրա:

Աղյուսակ 3-ի Ն1/1 (հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև հարաբերակցությունը) և Ն1/2 (Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև հարաբերակցությունը) նորմատիվները կիրառվում են բանկի կապիտալի համարժեքությունը գնահատելու համար: Այս նորմատիվները կարևոր ցուցանիշներ են, որոնք ցույց են տալիս, թե որքան ապահովված է բանկը ռիսկերի նկատմամբ՝ հիմնվելով նրա կապիտալի մակարդակի և ակտիվների ռիսկային առանձնահատկությունների վրա:

«Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը կազմում է 102.5 մլրդ ՀՀ դրամ, իսկ նորմատիվային կապիտալը՝ 281.5 մլրդ ՀՀ դրամ: Ն1/1 նորմատիվը կազմում է 21.20%, իսկ Ն1/2-ը՝ 22.20%, որոնք զգալիորեն գերազանցում են 6.2% նվազագույն շեմը՝ ցույց տալով բանկի կայուն կապիտալային դիրքը: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն նույնպես ունի դրական ցուցանիշներ՝ 18.4 մլրդ ՀՀ դրամ կանոնադրական և 62.8 մլրդ ՀՀ դրամ նորմատիվային կապիտալով: Այս բանկի Ն1/1-նորմատիվը 21.50% է, իսկ Ն1/2-ը՝ 22.30%, որոնք ևս անցնում են սահմանված նվազագույն նորմաները:

Աղյուսակ 3-ի տվյալներով «Արդշինբանկ» ՓԲԸ ընդհանուր իրացվելիության նորմատիվը (Ն2/1) կազմում է 42.20%, իսկ ընթացիկ իրացվելիության նորմատիվը (Ն2/2)՝ 75.40%: Համեմատության համար նշենք՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Ն2/1-ը 26.20% է, իսկ Ն2/2-ը՝ 64.70%: Այս տվյալները վկայում են, որ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ունի ավելի բարձր իրացվելիություն և ֆինանսական հզորություն, ինչը նվազեցնում է կարճաժամկետ ֆինանսական ճգնաժամերի ռիսկերը:

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ եկամուտների և ծախսերի վերլուծությունը: «Արդշինբանկ» ՓԲԸ-ն առանձնանում է ամենաբարձր շահութաբերությամբ: Ուստի կատարել ենք նաև ուսումնասիրվող 2 բանկերի եկամուտների և ծախսերի վերլուծություն:

ՀՀ առևտրային բանկերի եկամուտների զգալի մասը կազմում են տոկոսային եկամուտները, և առավելագույն մեծությունը արձանագրվել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից՝ շուրջ 144 մլրդ դրամ: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ցուցանիշը զգալիորեն ցածր է՝ մոտ 22 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի շահույթի կարևոր բաղադրիչ են նաև զուտ կոմիսիոն եկամուտները, որոնք կազմում են շուրջ 12%: Այս ցուցանիշը ամենաբարձրն է եղել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի դեպքում՝ հավանաբար պայմանավորված ծախսերի համեմատաբար ցածր և եկամուտների բարձր մակարդակով:

Աղյուսակ 4

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ եկամուտների և ծախսերի կազմը (31/12/2024 թ. դրությամբ, հազ. դրամ)²⁴

ԱՆՎԱՆՈՒՄԸ	«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ		«Արդշինբանկ» ՓԲԸ		ԸՆԴԱՄԵՆԸ
	գումար	Տ/Կ	գումար	Տ/Կ	
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	21,601,343	2%	143,621,030	16%	886,619,370
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4,299,571	1%	43,082,051	12%	368,910,168
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	17,301,772	3%	100,538,979	19%	517,709,202
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	2,298,047	2%	30,809,261	21%	147,200,458
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	740,116	1%	6,303,819	11%	59,455,399
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	1,557,931	2%	24,505,442	28%	87,745,059
Եկամուտ շահաբաժիններից		0%		0%	13,306
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	2,025,592	1%	63,286,427	39%	160,424,084
Այլ գործառնական եկամուտներ	380,348	4%	6,692,088	71%	9,404,885
Գործառնական եկամուտներ	2,405,940	1%	69,978,515	41%	169,842,275
Զուտ մասհանումներ ակտիվների					
հնարավոր կորուստների պահուստներին	-1,293,359	-4%	8,462,899	27%	31,382,527
Ընդհանուր վարչական ծախսեր	4,960,177	2%	40,037,589	19%	207,342,376
Այլ գործառնական ծախսեր	5,135,716	5%	15,229,964	14%	107,495,855
Վերահսկվող միավորներում ներդրումներից		0%	26,037,657	100%	26,037,657
զուտ շահույթ/վնաս					
Շահույթը / (վնասը) մինչև հարկումը	12,463,109	3%	157,330,141	35%	455,113,435
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	2,267,373	3%	24,620,225	30%	81,768,905
Շահույթը (վնասը) հարկումից հետո	10,195,736	3%	132,709,916	36%	373,344,530
Այլ համապարփակ եկամուտ	-	0%	-	0%	8,013,649
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ		0%		0%	8,557,590
Դրամական հոսքերի հեջավորում		0%		0%	1,088,058
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		0%		0%	-1,631,999
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո	10,195,736	3%	132,709,916	35%	381,358,179
Բանկի աշխատակիցների թիվը	397	3%	1260	10%	12876

Բանկերի միաձուլման միջազգային փորձից հատկապես ուշագրավ է ԱՄՆ-ի փորձը՝ 2008 թ. ֆինանսական ճգնաժամի ժամանակ, երբ Merrill Lynch-ը միաձուլվեց Bank of America-ի հետ՝ խուսափելով համակարգային

²⁴ Կազմել են հեղինակները՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

կոլապսից: Սակայն այս գործընթացն առաջ բերեց «ծախողվելու չափազանց մեծ» (Too Big to Fail) խնդիրը, ինչը հանգեցրեց խիստ կարգավորումների անհրաժեշտության, ինչպիսիք են Dodd-Frank օրենքով սահմանված վերահսկողության մեխանիզմները, կապիտալի պահանջները և լուծարման պլանների մշակումը՝ ապագայում նման ռիսկերից խուսափելու նպատակով²⁵: Այս համատեքստում «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, միաձուլման արդյունքում մեծանալով, պետք է գնահատի նման ռիսկերը՝ վերափոխաստվորելով իր դերը ազգային ֆինանսական համակարգում:

Տեղական մակարդակում «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ունի միավորման գործնական փորձ. 2017 թ. միավորեց «Առէքսիմբանկ-Գազպրոմբանկ Խումբ» ՓԲԸ-ն՝ դառնալով Հայաստանի խոշորագույն բանկերից մեկը կապիտալի, ակտիվների և մասնաճյուղերի թվի առումով: Միավորման արդյունքում բանկի ընդհանուր կապիտալը կազմեց մոտ 74 մլրդ դրամ, իսկ ակտիվները՝ շուրջ 540 մլրդ դրամ: Այս գործընթացը հնարավորություն տվեց համախմբելու ռեսուրսները, տեխնոլոգիաներն ու մարդկային ներուժը՝ բարձրացնելով բանկի մրցունակությունն ու սպասարկման որակը: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ունի միավորման փորձ և անհրաժեշտ կարողություններ, որոնք թույլ են տալիս արդյունավետորեն հաղթահարել նման գործընթացների ընթացքում առաջացող մարտահրավերները:

SWOT վերլուծություն: «Արդշինբանկի» հիմնական ուժեղ կողմերից է ՀՀ բանկային համակարգում իր առաջատար դիրքը: Բանկը գերազանցում է մյուս բանկերին՝ ակտիվների, կապիտալի և շահութաբերության առումներով: Բանկն ունի միջազգային վարկանշային երեք գործակալությունների դրական գնահատականները՝ Standard & Poor's, Moody's և Fitch Ratings²⁶, ինչը ավելացնում է նրա վստահության մակարդակը շուկայում: Բացի այդ, «Արդշինբանկը» հաջողությամբ թողարկել է եվրոպարտատոմսեր, ինչը բանկին բացառիկ հնարավորություններ է տրամադրում միջազգային ֆինանսական շուկայում: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը», որպես խոշոր կորպորատիվ հաճախորդներ ունեցող բանկ, ամուր կապեր ունի միջազգային շուկայում: Այն ունի նաև տեխնոլոգիական հարթակներ, որոնք կարող են հզորացնել «Արդշինբանկի» տեխնոլոգիական ենթակառուցվածքը:

«Արդշինբանկի» համար մեկ այլ խնդիր կարող է լինել նոր ծառայությունների և համակարգերի ինտեգրման հարցը՝ հաշվի առնելով, որ բանկը չունի բավականաչափ փորձ դրանց համակարգման առումով: Սա կարող է առաջացնել ժամանակավոր դժվարություններ, հատկապես միավորման սկզբնական փուլերում:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» դեպքում, միավորման ընթացքում, կարող են ի հայտ գալ խոչընդոտներ սպասարկման համակարգերի ինտեգրման ու կառավարման արդյունավետության ապահովման գործում: Այս դժվարությունները կարող են նաև նվազեցնել հաճախորդների բավարարվածության աստիճանը, եթե դրանք չլուծվեն ժամանակին:

²⁵ Տե՛ս Lissa L. Broome, The Dodd-Frank Act: Tarp Bailout Backlash and Too Big To Fail, 15 N.C. Banking Inst. 69 (2011), <http://scholarship.law.unc.edu/ncbi/vol15/iss1/5>

²⁶ Տե՛ս Standard & Poor's, <https://www.spglobal.com/ratings/en/>, Moody's, <https://www.moodys.com/>, Fitch Ratings, <https://www.fitchratings.com/>

Միավորումն ունի բազմաթիվ հնարավորություններ՝ սկսած տեխնոլոգիական հարթակների համադրությունից մինչև մարդկային ռեսուրսների հարստացումը: «Արդշինբանկը» կարող է օգտագործել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» տեխնոլոգիական հզորությունը և նորարարությունները՝ բարելավելով ծառայությունների որակը և մատակարարման արագությունը: Միաժամանակ, երկու բանկերի համատեղ ուժերով կարող են բարելավվել գործառնական գործընթացները, ինչը կխթանի բանկի մրցունակությունը ՀՀ-ում և ողջ տարածաշրջանում:

«Արդշինբանկը» կարող է բախվել ռիսկերի՝ կապված միջազգային հաճախորդների սպասարկման հետ: Միջազգային պատժամիջոցների ռեժիմները կարող են խոչընդոտել նրա գործունեությունը՝ բացասաբար ազդելով բանկի ֆինանսական արդյունքների վրա:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» մեկ այլ ռիսկ կարող է լինել հաճախորդների կորուստը, եթե «Արդշինբանկը» չկարողանա ապահովել ծառայությունների որակի բարձր մակարդակ: Բացի այդ, միավորման հետևանքով առաջացող կառավարման բարդությունները և սպասարկման համակարգերի անլուծելի խնդիրները կարող են առաջացնել հաճախորդների դժգոհությունը՝ դրանով իսկ կրճատելով եկամուտները:

Եզրակացություն: Ընկերությունների միացումը և միաձուլումը բարդ ու բազմաշերտ գործընթացներ են, որոնք անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական խիստ կարգավորմամբ և պետական համապատասխան մարմինների վերահսկողությամբ՝ շուկայում հավասարակշռություն և արդար մրցակցային պայմաններ պահպանելու համար: Այս գործընթացները պահանջում են մանրակրկիտ պլանավորում և համակարգված համագործակցություն բոլոր ներգրավված կողմերի միջև՝ սկսած ընկերությունների ղեկավար կազմից մինչև պետության վերահսկողական մարմիններ:

Իրավական տեսանկյունից նման վերակազմակերպումները պետք է ուղեկցվեն իրավական ամբողջական փաստաթղթերով՝ միացման կամ միաձուլման պայմանագիր, փոխանցման ակտ, բաժնետոմսերի կամ բաժնեմասերի վերաձևակերպման կարգ և այլն, որոնք հաստատվում են ընկերությունների ընդհանուր ժողովների կողմից: Հատուկ կարևորություն ունի այն փաստը, որ գործընթացի ժամանակահատվածում իրականացվում է իրավահաջորդություն, որի արդյունքում նորաստեղծ կամ պահպանվող ընկերությունը ստանձնում է բոլոր նախկին ընկերությունների իրավունքներն ու պարտավորությունները: Սա կարևոր նախապայման է այն բանի համար, որ բիզնես գործունեությունը չընդհատվի և ապահովվի իրավական ու ֆինանսական շարունակականություն:

Տնտեսական տեսանկյունից միացման և միաձուլման նպատակն է բարձրացնել շուկայի ներթափանցելիությունը, ամրապնդել ընկերության դիրքերը, արդյունավետորեն օգտագործել ռեսուրսները, խնայել ծախսերը և հաճախ՝ դուրս գալ նոր շուկաներ: Սակայն նման գործարքները կարող են նաև մրցակցության վրա բացասական ազդեցություն ունենալ՝ շուկայում առաջացնելով գերիշխող դիրքեր, մենաշնորհի կամ նվազեցնելով սպառողների ընտրության

հնարավորությունը: Այդ իսկ պատճառով օրենքով սահմանված որոշակի շեմեր գերազանցելու դեպքում գործարքը ենթակա է հայտարարագրման և գնահատման Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից, իսկ ֆինանսական կազմակերպությունների պարագայում վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ընկերությունների միացումը և միաձուլումը ոչ միայն ռազմավարական տնտեսական քայլեր են, այլև պահանջում են բարձր մակարդակի իրավական, ֆինանսական և կառավարչական պատրաստվածություն: Դրանք կարող են զգալիորեն նպաստել ընկերության աճին ու զարգացմանը, սակայն միայն այն դեպքում, երբ իրականացվում են օրենքի տառին համապատասխան և հաշվառելով բոլոր կողմերի շահերը:

«Արդշինբանկ» ՓԲԸ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ միավորումը կարևոր փուլ է ՀՀ բանկային համակարգում, որը կարող է խորքային ազդեցություն ունենալ ոչ միայն երկու բանկերի, այլև ողջ բանկային ոլորտի զարգացման վրա: Միավորման գործընթացը հսկայական հնարավորություններ է ստեղծում, բայց նաև որոշակի ռիսկեր է պարունակում, որոնք պետք է կանխվեն ճիշտ կառավարման և գործնական քայլերի միջոցով:

Ֆինանսական ուժի համախմբում: Միավորումը կնպաստի «Արդշինբանկի» և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» ֆինանսական ուժի համախմբմանը՝ ստեղծելով ավելի մեծ ու կայուն ընկերություն: Սա կհանգեցնի բանկի ակտիվների, կապիտալի և շահույթի զգալի աճի, ինչը թույլ կտա ավելի ճկուն ու արդյունավետ գործել բանկի տնտեսական մրցավազքում: Այս փոփոխությունները կարող են նաև նպաստել ֆինանսական կայունության ամրապնդմանը՝ ավելի վստահելի և հուսալի բանկային համակարգ ձևավորելով:

Շուկայի դիրքերի բարելավում: Միավորման արդյունքում կհայտնվի ֆինանսական, բանկային ավելի համապարփակ մոդել, որը կկարողանա ավելի մեծ ռեսուրսներով մուտք գործել ՀՀ ու միջազգային շուկաներ, կնպաստի տարբերակված ծառայությունների մատուցմանը, ինչը կարող է բարձրացնել «Արդշինբանկի» մրցունակությունը՝ այն դարձնելով առավել գրավիչ տարբեր տեսակի հաճախորդների համար:

Բարդություններ կառավարման ոլորտում: Միավորումը մի շարք կառավարման, գործընթացների և մշակույթների ինտեգրման խնդիրներ է առաջացնում: Բացի ֆինանսական խնդիրներից, երբ երկու տարբեր բանկեր միավորվում են, հաճախ կարող են ծագել մշակութային տարբերություններ, հատկապես երբ գործառնական մեթոդները, աշխատանքային մոտեցումները կամ ընկերության արժեքները տարբերվում են: Սա կարող է պահանջել ժամանակ և ռեսուրսներ՝ գործառնական հարմոնիան ապահովելու համար:

Ռիսկերի կառավարում և գործառնական կայունություն: Միավորումը կարող է ստեղծել գործառնական ռիսկեր՝ կապված նոր համալրված պարտավորությունների, ակտիվների վերաձևման, հաճախորդների սպասարկման փոփոխությունների հետ: Եթե հստակ ռազմավարություն և կառավարման համակարգեր չմշակվեն, կարող են առաջանալ խնդիրներ բանկի գործառնական կայունության պահպանման համակարգում: Ռիսկերի նվազեցումը և արդյունավետ կառավարումը պետք է միավորման հիմնական ուղղությունները լինեն:

Հաճախորդների և աշխատակիցների ազդեցություն: Հաճախորդների համար միավորման ազդեցությունը կարող է տարբեր լինել՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական: Որոշ հաճախորդներ կարող են վախենալ ծառայությունների փոփոխություններից կամ դժվարությունների առաջացումից, մինչդեռ մյուսները կնախընտրեն սպասարկման ավելի լայն շրջանակը: Աշխատակիցների համար նույնպես անցումային շրջանը կարող է բարդ լինել, քանի որ յուրաքանչյուր կազմակերպություն ունի իր սեփական աշխատանքային մշակույթը և գործառնությունները: Սակայն եթե միավորումն իրականացվի ճիշտ ռազմավարությամբ, կարող է ապահովել բանկի ներսում նոր հնարավորություններ՝ աճի և նոր գործառնական դինամիկայի համար:

Շուկայի մրցակցային կառուցվածք: Բանկերի միավորման արդյունքում հայկական բանկային համակարգում բազում հարցեր կարող են առաջանալ՝ կապված շուկայի մասնաբաժնի մեծացման, այլ բանկերի հետ մրցակցության սրման և չկազմակերպված որոշ շուկաների մրցակցային հավասարակշռության խախտման հետ: Այս փոփոխությունները կարող են հանգեցնել շուկայի ռեսուրսների վերաբաշխման և աշխատավարձերի հավասարեցման անհրաժեշտության:

Այսպիսով՝ «Արդշինբանկի» և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» միավորումը կարևոր քայլ է ՀՀ բանկային համակարգում, որը կնպաստի ֆինանսական ուժի կենտրոնացմանը, կառավարման բարելավմանը և նոր ծառայությունների հասանելիությանը: Այնուամենայնիվ, միավորման գործընթացը պետք է խիստ վերահսկվի, որպեսզի հնարավոր ռիսկերը կանխվեն և հաջողությամբ ավարտվի ինտեգրման գործընթացը: Կառավարման մեջ զերծ մնալով ավելորդ բարդություններից՝ միավորումը կարող է դառնալ հաջող օրինակ բանկերի զարգացման և մրցունակության բարձրացման տեսանկյունից:

Օգտագործված գրականություն

1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-68՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 1996 թ. հունիսի 30-ին, <https://www.arlis.am>
2. «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում, 16.04.2013:
3. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված է 2001 թվականի սեպտեմբերի 25-ին, <https://www.arlis.am/hy/acts/69106>
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, <https://www.arlis.am/hy/acts/74658>
5. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/?nid=12&type=1> 11/05/2025 թ.:
6. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի N 1955 –Ն հրաման «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրք հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196264>

7. ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2023, https://www.cba.am/AM/periodicals/Stability_Report_2023.pdf
8. ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի հիմնադրույթները, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>
9. ՀՀ օրենքը ՀՀ կենտրոնական բանկի մասին, ՀՕ-69՝ ընդունված է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1996 թ. հունիսի 30-ին, <https://www.arlis.am>
10. ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>
11. ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված միջանկյալ հաշվետվություններում ներառված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>
12. Basel Committee, <https://www.bis.org/bcbs/history.htm>
13. By Updated August 31, 2022, Reviewed by RoberT C. Kelly, Fact checked by Vikki Velasquez, <https://www.investopedia.com/basel-iv-5218598>
14. Daugherty G., Economy Introduction To Fiscal Policy “What Is Basel IV?” article.
15. Fitch Ratings, <https://www.fitchratings.com/>
16. History of the Basel Committee, <https://www.bis.org/bcbs/history.htm>
17. Moody's, <https://www.moody.com/>
18. Standard & Poor's, <https://www.spglobal.com/ratings/en/>

ՎԱԳԱՆ ԲԱԲԱՅԱՆ

Доцент кафедры управленческого учёта и аудита АГЭУ,
кандидат экономических наук

ՆՈՒՆԵ ՅԱԽԱՐՅԱՆ

Студентка 1-ого курса магистратуры
кафедры управленческого учёта и аудита АГЭУ

Особенности процесса объединения и/или слияния коммерческих банков Республики Армения (на примере сделки между ЗАО «Ардшинбанк» и ЗАО «HSBC Банк Армения»).– Цель данного исследования – изучить процесс объединения и слияния компаний, оценив влияние приобретения ЗАО «Ардшинбанк» ЗАО «Эйч-с-Би-Си Банк Армения» на финансово-экономическое состояние банка, а также выявить возможные новые управленческие вызовы.

В целях достижения данной цели исследованы вопросы принятия решения о слиянии/объединении, содержание договора о слиянии/объединении, а также вопросы, рассматриваемые и решаемые на совместном собрании компаний-участников слияния (объединения). Кроме того, проанализированы особенности коммерческих банков Республики Армения.

Изучив приобретение ЗАО «Эйч-Эс-Би-Си Банк Армения» ЗАО «Ардшинбанком», был проведён анализ финансово-экономических показателей обоих банков. Для этого применялись количественные и сравнительные методы анализа, а также был выполнен SWOT-анализ, позволивший выявить сильные и слабые стороны, возможности и угрозы нового объединённого банка.

В рамках исследования проанализированы структура активов, нормативный капитал, рентабельность, доходы и расходы, показатели ликвидности и соотношение капитала, а также вопросы, связанные с управленческой культурой обеих банков.

В целях выявления возможных вызовов было изучено соответствующее законодательство Республики Армения. Также рассмотрен местный и международный опыт, включая как успешные, так и проблемные примеры слияний банков. Результаты показывают, что в результате слияния ЗАО «Ардшинбанк» укрепит свою ведущую позицию в банковской системе Армении, усилив финансовую стабильность и увеличив рыночное влияние. В то же время отмечены потенциальные риски слияния, связанные с интеграцией управления, сохранением качества услуг и возможным воздействием международных санкций. Этот анализ также подчеркивает стратегические возможности ЗАО «Ардшинбанк» эффективно реализовывать такие крупные интеграционные процессы и играть решающую роль в обеспечении системной стабильности.

Ключевые слова: «Ардшинбанк» ЗАО, «Эйч-Эс-Би-Си Банк Армения» ЗАО, активы, нормативный капитал, балансовый капитал, прибыль, банк

JEL: G21, G34

DOI: 10.52174/29538114_2025.1-53

YAHAN S. BABAYAN

Associate Professor, ASUE Chair of Management
Accounting and Audit, PhD in Economics

NUNE ZAKHARYAN

First-Year Master's Student, ASUE Chair of
Management Accounting and Audit

Peculiarities of the Process of Unification and/or Merger of Commercial Banks in the Republic of Armenia (the Case of the Transaction Between "Ardshinbank" CJSC and "HSBC Bank Armenia" CJSC). The main objective of this study is to analyze the nature of corporate mergers and unification, with a particular focus on assessing the impact of Ardshinbank CJSC's acquisition of HSBC Bank Armenia CJSC on the bank's financial and economic

position, while also identifying potential new challenges in management.

For this purpose, the study examines how decisions regarding mergers or unifications are made, what provisions are included in the merger/acquisition agreement, which issues are discussed and resolved during the joint meeting of the participating companies, as well as the specific characteristics of commercial banks operating in the Republic of Armenia.

In the context of the analysis, Ardshinbank CJSC's acquisition of HSBC Bank Armenia CJSC, the financial and economic indicators of both banks were examined. Quantitative and comparative analysis methods were applied, along with a SWOT analysis to identify the strengths, weaknesses, opportunities, and threats of the newly merged bank.

Within the scope of the study, an analysis was conducted of the asset structure, regulatory capital, profitability, income and expenditure patterns, liquidity and capital adequacy ratios, as well as key issues related to the management cultures of the two banks.

In order to identify potential challenges, the relevant legislation of the Republic of Armenia was studied. Local and international experiences were also examined, particularly both successful and problematic cases of bank mergers. The results indicate that as a result of the merger, Ardshinbank CJSC will consolidate its leading position in the Armenian banking system by strengthening financial stability and increasing market influence. At the same time, potential risks of the merger have been highlighted, related to management integration, maintaining service quality, and possible impacts of international sanctions. This analysis also underscores Ardshinbank CJSC's strategic capability to effectively carry out such major integration processes and play a decisive role in ensuring systemic stability.

Keywords: *“Ardshinbank” CJSC, “HSBC Bank Armenia” CJSC, Assets, Regulatory Capital, Equity Capital, Profit, Bank*

JEL: G21, G34

DOI: 10.52174/29538114_2025.1-53